ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ԵՎ ԱՀ /ԼՂ/ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ
2020

Հեղինակներ՝ Արմինե Սադիկյան

Նազելի Մովսեսյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Սույն տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են, և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) ներկայացնում է 2020 թվականի առաջին կիսամյակում՝ հունվար-հունիս ամիսներին, Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Արցախի Հանրապետության /Լեռնային Ղարաբաղի/ զինված ուժերի զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները, որոնք հավաքագրվել են զանգվածային լրատվամիջոցներով և պաշտոնական աղբյուրներով տարածված տեղեկություններից, ինչպես նաև Կազմակերպության կողմից պաշտոնական կառույցներին (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե) ուղղված տեղեկատվության հարցումների պատասխաններից:

Այսպիսով՝ 2020 թ.-ի առաջին կիսամյակում գրանցվել է ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերի **31** զինծառայողի մահվան ելքով դեպք:

Նշված **31 դեպքերից՝**

- **10-ը՝ առողջական խնդիրների** հետևանքով են,
- **8-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու**,
- **6-ը՝ դժբախտ պատահարի** (3-ը՝ ձնահյուսի, 1-ը՝ ձորն ընկնելու, 1-ը՝ մեքենայում բռնկված հրդեհի, 1-ը տրակտորի շրջվելու հետևանքով),
- **2-ը՝ սպանության (1-ը՝ խուլիգանական դրդումներով սպանության, 1-ը՝ այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարված սպանության),**
- **3-ը՝ ավտովթարի,**
- **1-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման**,
- **1-ը՝ ականի պայթյունի**:

Համեմատության համար նշենք, որ 2019 թ. նույն ժամանակահատվածում՝ առաջին կիսամյակում, գրանցվել է **30 զինծառայողի մահվան դեպք** (տե՛ս աղյուսակ 1), որից՝

- **12-ը՝** ավտովթարի հետևանքով,
- **8-ը՝** առողջական խնդիրների,
- **4-ը՝** ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու,
- **3-ը՝** սպանության (1-ը՝ դիտավորյալ, 1-ը՝ ծառայակցի կողմից զենքի հետ վարվելու կանոնների խախտման, 1-ը՝ երկու կամ ավելի անձանց սպանության փորձի),
- **2-ը՝** հրադադարի ռեժիմի խախտման,
- **1-ը՝** դժբախտ պատահարի (ընկել է ձորը):

Աղյուսակ 1-ում ներկայացվում են ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2019, 2020 թթ. առաջին կիսամյակում զինծառայողների մահացության դեպքերն՝ ըստ պատճառների և ամիսների:

Աղյուսակ 1. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2019 և 2020 թթ. առաջին կիսամյակում զինծառայողների մահացության դեպքերի պատճառներն՝ ըստ ամիսների

Ամիս	Հրադադարի ռեժիմի խախտում		Ինքնասպանություն/ ինքնասպանության հասցնել		Առողջական խնդիրներ		Ավտովթար		Սպանություն								Ականի պայթյուն		Դժբախտ պատահար								Ընդամենը			
									Խուլիգանական դրդում ներով		ԶՕԿ		Երկու կամ ավելի անձանց սպանության փորձ		Այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով				Ընկել է ձորը		Ձնահյուս		Տրակտորի շրջվել		Հրդեհ մեքենայում		Հրապարակված/պաշտ. կամ ոչ պաշտ./	Չհրապարակված /միայն պաշտոնական գրությամբ ստացված/	Հրապարակված/պաշտ. կամ ոչ պաշտ./	Չհրապարակված /միայն պաշտոնական գրությամբ ստացված/
	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019	2020	2019		2020	
Հունվար			1	2	2	3	2													1							**5**	**0**	**6**	**0**
Փետրվար				3	1	1	1		1													3					**3**	**0**	**7**	**0**
Մարտ		1				1	2	1			1		1						1								**5**	**0**	**2**	**1**
Ապրիլ			1	1	2		1									1											**1**	**3**	**2**	**0**
Մայիս				1	1		4			1								1									**4**	**1**	**3**	**0**
Հունիս	2		2	1	2	5	2	2																1		1	**5**	**3**	**4**	**6**
Ընդամենը	**2**	**1**	**4**	**8**	**8**	**10**	**12**	**3**	**1**	**1**	**1**	**0**	**1**	**0**	**0**	**1**	**0**	**1**	**1**	**1**	**0**	**3**	**0**	**1**	**0**	**1**	**23**	**7**	**24**	**7**
																											30		**31**	

2020 թ.-ի մահացության 31 դեպքից միայն **17**-ի մասին է տարածվել **պաշտոնական հաղորդագրություն**, մյուս **14** դեպքերի (8-ը առողջական խնդիրների հետևանքով են, 2-ը՝ դժբախտ պատահարի, 2-ը՝ ավտովթարի, 2-ը՝ ինքնասպանության) վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դրանք հետագայում պաշտոնական հարցմամբ՝ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից ստացված տեղեկատվությամբ համարվել են զինվորական ծառայության հետ կապ չունեցող մահվան դեպքեր:

Նշված 14 դեպքերից 7-ի մասին հայտնի է դարձել ոչ պաշտոնական աղբյուրներից (3-ի՝ ավտովթարի, ինքնասպանության և տրակտորի շրջվելու հետևանքով մահվան դեպքերի մասին՝ shamshyan.com կայքի հրապարակումներից, իսկ առողջական խնդիրների հետևանքով մահվան 3 դեպքերի, ինչպես նաև մեքենայում բռնկված հրդեհի հետևանքով 1 դեպքի մասին հրապարակվել է razm.info[1] կայքում, որը հղում է կատարել ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված իր հարցման պատասխանին), *իսկ **առողջական** խնդրի հետևանքով արձանագրված **5, ավտովթարի** հետևանքով՝ **1 և ինքնասպանության** հետևանքով **1 դեպքի մասին տեղեկություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, և ո՛չ էլ ԶԼՄ-ներով: Այդ 7 դեպքի մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը տեղեկացել է պաշտոնական հարցմամբ՝ ՀՀ գլխավոր դատախազությունից:***

Ըստ էության, կարող ենք արձանագրել, որ պաշտոնական ձևակերպմամբ (ՀՀ գլխավոր դատախազության դասակարգմամբ) զինվորական ծառայության հետ կապ չունեցող մահվան դեպքերի մասին պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:

Գծապատկեր 1. 2019 և 2020 թթ. առաջին կիսամյակներում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացության դեպքերն՝ ըստ պատճառների



[1] https://razm.info/140067, https://razm.info/143607

Համեմատելով 2019 և 2020 թվականների առաջին կիսամյակներում արձանագրված մահվան դեպքերի պատճառներն՝ արձանագրում ենք, որ 2020 թվականին՝

- **կրկնակի (4-ով) ավելացել են ինքնասպանության դեպքերը,**
- **6 անգամ (5-ով) ավելացել են դժբախտ պատահարի հետևանքով մահացության դեպքերը,**
- **2-ով ավելացել են առողջական խնդիրների հետևանքով մահվան դեպքերը:**

*Դիտարկելով 2019 թ. առաջին կիսամյակում **ինքնասպանության (4) և սպանության (3) հետևանքով զինծառայողների մահացության դեպքերը**՝ կարող ենք արձանագրել, որ նշված երկու պատճառով դեպքերը կազմում են մահացության դեպքերի ընդհանուր թվի գրեթե 1/4-ը: Իսկ 2020 թ. առաջին կիսամյակում **ինքնասպանության (8) և սպանության (2)** հետևանքով մահացության դեպքերը կազմում են մահվան դեպքերի 1/3-ը: **Ինքնասպանության և սպանության դեպքերը հիմնականում զինծառայողների միջև կանոնադրային հարաբերությունների խախտումների հետևանք են, և, հետևաբար, դեռևս չլուծված և խիստ մտահոգիչ է մնում զինվորական կարգապահության պահպանման հետ կապված խնդիրների առկայությունը: Բացի այդ, զինված ուժերում ինքնասպանության և սպանության դեպքերի շարունակականությունը վկայում է այն մասին, որ նման դեպքերով կա՛մ չի իրականացվում պատշաճ ծառայողական քննություն, կա՛մ դրանց արդյունքում բացահայտված և արձանագրված խնդիրների կանխման, վերացման կամ լուծման ուղղությամբ քայլերը դեռևս արդյունավետ չեն:***

Ուշադրություն դարձնենք, որ 2020 թ. առաջին կիսամյակում և՛ ինքնասպանության, և՛ սպանության դեպքեր արձանագրվել են ապրիլ (2) և մայիս (2) ամիսներին:

Հիշեցնենք, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի «2020 թ. առաջին եռամսյակում ՀՀ և ԱՀ /ԼՂ/ զինված ուժերում մահացության դեպքերի մասին» տեղեկանքում[2] անդրադարձել ենք 2020 թ.-ի հունվար-փետրվար ամիսներին ինքնասպանության դեպքերի կտրուկ աճին, որը հանրային մեծ դժգոհություն և վրդովմունք էր առաջացրել: Նշել ենք նաև, որ դեպքերը համընկել էին Արցախի Հանրապետությունում նախագահական և խորհրդարանական ընտրությունների քարոզչական ժամանակահատվածի հետ: Հանրային դժգոհություններից հետո՝ մարտ ամսին, ինքնասպանությունների դեպքեր չգրանցվեցին:

Պետք է նշել, որ, այնուամենայնիվ, հայտնի չէ՝ արդյո՞ք ՀՀ և ԱՀ/ԼՂ պաշտպանության նախարարությունների կամ համապատասխան քննչական մարմինների կողմից կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ այդ դեպքերի և, ընդհանրապես, բոլոր դեպքերի պատճառների և հանգամանքների բացահայտման ուղղությամբ, քանի որ կիսամյակային տվյալներով տեսնում ենք, որ ապրիլ ամսից սկսած՝ կրկին արձանագրվեցին մահացության դեպքեր՝ ոչ միայն ինքնասպանության, այլ նաև սպանության հետևանքով:

[2] https://drive.google.com/file/d/1OufOq_RFjbduUMHQSK3J3LqdtBffXNfY/view

*Ինչ վերաբերում է տեղի ունեցող **դժբախտ պատահարներին**, փաստենք, որ 2020 թ.-ին ավելացել են դրանց հետևանքով մահացության դեպքերը: 2019 թ.-ի 1-ին կիսամյակում դժբախտ պատահարի (ձորն ընկնելու) հետևանքով տեղի է ունեցել միայն 1 դեպք, 2020 թ. 1-ին կիսամյակում նման բնույթի պատճառով մահացել են 6 զինծառայողներ (դեպքերի ընդհանուր թվի 19 %-ը):*

Մասնավորապես՝ 2020թ.-ի 1-ին կիսամյակում ձնահյուսի հետևանքով 3 *պայմանագրային զինծառայող մահացել են՝ դիրքերից զորամաս գնալու ճանապարհին, երբ, ըստ news.am-ի տվյալների, նրանց ոտքերի տակ ձյան շերտը բացվել է, ու ընկելով՝ տևական ժամանակ մնացել են ձյան հաստ շերտի տակ: Եվս **1** դեպքում զինծառայողը մահացել է՝ ձորն ընկնելու հետևանքով: Դեպքը, ինչպես և նախորդը, պաշտոնապես համարվել է զինծառայության հետ կապված: Այնուամենայնիվ, դեռևս հայտնի չէ, թե ինչպես է պատահել, որ զինծառայողը, գտնվելով ծառայության մեջ, ընկել է ձորը: Մինչդեռ, Կազմակերպության հարցմանն ի պատասխան, Դատախազությունը տեղեկացրել է, որ զինծառայողի մահվան դեպքի առթիվ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:*

Եվս 2 դժբախտ պատահարի հետևանքով դեպքերից մեկն արձանագրվել է մեկ այլ անձի վարած մեքենայի հրդեհվելու արդյունքում, որտեղ զինծառայողը գտնվել է որպես ուղևոր և չի կարողացել դուրս գալ մեքենայից: Դեպքը Դատախազության կողմից համարվել է զինվորական ծառայության հետ կապ չկապված: Իսկ մյուս դեպքում, որը Դատախազության կողմից համարվել է կրկին զինվորական ծառայության հետ չկապված, զինծառայողը դեպքի պահին գտնվել է ազատ հերթափոխում: Դեպքն արձանագրվել է տրակտորի շրջվելու հետևանքով:

Եվնելով դժբախտ պատահարի հետևանքով դեպքերի թվի աճից՝ կարող ենք ենթադրել, որ կա՛մ զինծառայողների կողմից չեն պահպանվում ծառայության անվտանգության կանոնները, կա՛մ վերջիններս այդ մասին չեն ստանում պատշաճ հրահանգավորում:

Ծառայության անվտանգության կանոնների պահպանմանն անդրադառնալիս՝ հարկ է նշել, որ 2020 թ.-ի 1-ին կիսամյակում ականի պայթյունի հետևանքով տեղի ունեցել մահացության 1 դեպք: Ընդ որում՝ մահացողը հանդիսանում է սպա, ինչն առավել մտահոգիչ է՝ հաշվի առնելով սպայական անձնակազմի պատրաստվածության մակարդակի և զինվորական ծառայության կազմակերպման գործում սպաների կողմից անվտանգության բոլոր կանոնների պահպանման պարտավորությունը:

2020 թ.-ի 1-ին կիսամյակում **առողջական խնդիրների հետևանքով** արձանագրվել է զինծառայողների մահացության 10 դեպք, որը ևս կազմում մահացության ընդհանուր թվի մոտ 1/3-ը: Դեպքերից 2-ը պաշտոնապես (ՀՀ գլխավոր դատախազության կողմից) համարվել են զինվորական ծառայության հետ կապված, 8-ը՝ չկապված: Ընդ որում՝ զինվորական ծառայության հետ **կապված** են համարվել **2 պարտադիր ժամկետային**

զինծառայողների մահացության դեպքերը, իսկ **չկապված՝ 4 պայմանագրային** զինծառայողների, **3 սպաների** և **1 ենթասպայի** մահացության դեպքերը:

Նշենք, որ ըստ հասանելի ոչ պաշտոնական՝ ԶԼՄ տվյալների՝

2 ժամկետային զինծառայողներից՝

- 1-ի մոտ մինչ զորակոչվելն առկա է եղել միայն հարթաթաթություն ու ողնաշարի ծռվածություն,
- 1 ժամկետային զինծառայողի առողջական խնդիրների մասին հայտնի չէ:

Ըստ պաշտոնական՝ Դատախազության տվյալների.

4 պայմանագրային զինծառայողներից՝

- 2-ի դեպքում հայտնի չէ, թե ինչ առողջական խնդիրներ են նրանք ունեցել: Վերջիններս դեպքի պահին գտնվել են ազատ հերթափոխում կամ տանը:
- 1 պայմանագրային զինծառայողի մոտ ախտորոշվել է «հիպերտոնիկ կրիզ, հեմոռագիկ ինսուլտ»,
- 1 պայմանագրային զինծառայողի մոտ ախտորոշվել է «կրծքագեղձի քաղցկեղ՝ 4-րդ փուլում՝ գլխուղեղի, թոքերի, լյարդի մետաստազներով»: Վերջինս մահացել է տանը:

3 սպաներից՝

- 1-ի մոտ ախտորոշվել է «հեմոռագիկ ինսուլտ»,
- 1-ի մոտ՝ «կորոնավիրուսային հիվանդություն, թոքային զարկերակի տրոմբոէմբոլիա»,
- 1 սպայի առողջական խնդրի մասին հայտնի չէ: Ըստ պաշտոնական՝ ՀՀ գլխավոր դատախազության տվյալի՝ զինծառայողը մահացել է ինքնազգացողության վատացման արդյունքում:

1 ենթասպայի մահվան պատճառ է հանդիսացել սրտամկանի ինֆարկտը: Զինծառայողը հանկարծամահ է եղել տանը:

Ինչպես վիճակագրությունն է ցույց տալիս, առողջական խնդիրների հետևանքով մահացությունները նույնպես բավական մտահոգիչ են, նույնիսկ եթե դրանք պաշտոնապես համարվում են ծառայության հետ չկապված: «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը[3] սահմանում է զինծառայողների սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները, բուժկանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես՝ օրենքի հոդված 344-ը սահմանում է, որ զինծառայողների առողջական վիճակի բժշկական հսկողությունն իրականացվում է հետևյալ ուղիներով՝

- անձնակազմի ամենօրյա հսկողություն մարտական նախապատրաստության ընթացքում և կենցաղում,
- զինծառայողների բուժզննում,

[3] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121817

- զինծառայողների խորացված և հսկիչ-բժշկական քննություն, պլանային բուժզննումներ:

Հոդված 345-ը մասնավորեցնում է բոլոր խմբերը, որոնք ենթարկվում են բուժզննության՝ կոնկրետ դեպքերում:

Հետևաբար, հարց է առաջանում՝ արդյո՞ք այս բոլոր միջոցառումները պատշաճ կերպով իրականացվում են, թե ոչ: Վիճակագրական տվյալները թույլ են տալիս ենթադրելու, որ զինծառայողների խորացված և հսկիչ կամ կանխարգելիչ զննությունը պատշաճ չի իրականացվում, որի ապահովման դեպքում կարող են կանխվել այդ պատճառով մահացության դեպքերը:

2020 թ.-ի 1-ին կիսամյակում էականորեն **նվազել են ավտովթարի հետևանքով** մահացության դեպքերը. 3 դեպք՝ ի տարբերություն 2019 թ.-ի 1-ին կիսամյակի, երբ գրանցվել էր 12 նման դեպք:

Նշենք, որ 2020 թ.-ին ավտովթարի հետևանքով մահացության 3 դեպքերից 2-ն արձանագրվել են զինծառայողների սեփական/քաղաքացիական մեքենաներով վթարի ենթարկվելու արդյունքում, 1 դեպքում զինծառայողը գտնվել է ՊՆ-ի հաշվեկշռում գտնվող մեքենայում:

2019 թ.-ի 1-ին կիսամյակում ևս ՊՆ-ի հաշվեկշռում գտնվող մեքենայով վթարի հետևանքով մահացել է 1 զինծառայող, մյուս 11 դեպքերում՝ զինծառայողները գտնվել են սեփական/քաղաքացիական մեքենաներում:

Փաստենք, որ չնայած 2019 թ.-ի համեմատ, 2020 թ.-ին նվազել են ավտովթարի հետևանքով մահացության դեպքերը, այնուամենայնիվ, 2020 թ.-ի 1-ին կիսամյակում տեխնիկական պատճառներով արձանագրված մահացության դեպքերը կազմում են մահացության ընդհանուր թվի գրեթե 10 %-ը:

Ամփոփելով վերոշարադրյալն՝ արձանագրում ենք, որ 2020 թ.-ի 1-ին կիսամյակում գրանցված մահացության դեպքերի գերակշիռ մասը՝ 97 %-ը տեղի են ունեցել ոչ մարտական պայմաններում. մասնավորապես՝ 32 %-ը՝ առողջական խնդիրների, 26 %-ը՝ ինքնասպանության, 19 %-ը՝ դժբախտ պատահարի, 10 %-ը՝ ավտովթարի, 7 %-ը՝ սպանության, 3 %-ը՝ ականի պայթյունի հետևանքով, իսկ մարտական պայմաններում՝ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքերի թիվը կազմում է մահացության դեպքերի ընդհանուր թվի միայն 3 %-ը (մահվան 1 դեպք):

Նշենք նաև, որ 2020 թ.-ի դեպքերի մեծ մասը տեղի են ունեցել **հունվար, փետրվար և հունիս** ամիսներին՝ համապատասխանաբար **6, 7 և 10** դեպք, **մարտ և մայիս** ամիսներին գրանցվել է **3-ական** դեպք, **ապրիլին՝ 2** դեպք:

2020 թ.-ին մահացած 31 զինծառայողներից **14**-ը՝ **պայմանագրային ժամկետային** զինծառայողներ են, **9**-ը **պարտադիր ժամկետային**, 7-ը՝ **սպա, 1**-ը՝ **ենթասպա**:

2019թ.-ին մահացած **30** զինծառայողներից **8**-ը **պարտադիր ժամկետային** զինծառայողներ են, **13**-ը՝ **պայմանագրային ժամկետային**, **4**-ը՝ **սպա, 3**-ը՝ **ենթասպա, 2 դեպքում առայժմ ճշտված չէ** զինծառայության տեսակը:

Զինծառայողների մահվան դեպքերի պատճառներն՝ ըստ զինծառայության տեսակի կամ զինծառայողի կարգավիճակի

Եթե մահվան դեպքերը դիտարկենք ըստ պատճառի և մահացած զինծառայողների ծառայության տեսակի՝ կնկատենք, որ **ժամկետային զինծառայողների շրջանում** մահացության պատճառներն են՝

- **ինքնասպանությունը** (4 դեպք),
- **առողջական խնդիրները** (2 դեպք),
- **սպանությունը** (2 դեպք),
- **ավտովթարը** (1 դեպք):

Պայմանագրային զինծառայողների մահացության պատճառներն են՝

- **դժբախտ պատահարները** (5 դեպք),
- **առողջական խնդիրները** (4 դեպք),
- **ինքնասպանությունը** (3 դեպք),
- **ավտովթարը** (1 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտումը** (1 դեպք):

Սպաների մահվան պատճառ են հանդիսացել՝

- **առողջական խնդիրները** (3 դեպք),
- **ինքնասպանությունը** (1 դեպք),
- **ավտովթարը** (1 դեպք),
- **դժբախտ պատահարը** (1 դեպք)
- **ականի պայթյունը** (1 դեպք):

1 ենթասպայի մահվան պատճառ է հանդիսացել **առողջական խնդիրը**:

Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ 2020 թ.-ի 1-ին կիսամյակում **ինքնասպանության, առողջական խնդիրների և ավտովթարի** հետևանքով մահացության դեպքեր արձանագրվել են թե՛ **պարտադիր ժամկետային, թե՛ ժամկետային պայմանագրային զինծառայողների**, և թե՛ **սպաների** շրջանում *(տե՛ս գծապատկեր 2):*

Գծապատկեր 2. 2020թ. 1-ին կիսամյակում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների ծառայության տեսակն՝ ըստ մահվան պատճառների



Մահացության **31** դեպքերից **17**-ը տեղի է ունեցել **ՀՀ** տարածքում, **13**-ը՝ **ԱՀ/ԼՂ** տարածքում, 1 դեպքի վայրն առայժմ ճշտված չէ (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3. 2020 թ.-ի 1-ին կիսամյակում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների թիվն՝ ըստ մահվան դեպքերի տարածքների



Զինվորական ծառայության հետ կապված և չկապված դասակարգված մահացության դեպքեր

ՀՀ զինվորական կենտրոնական *դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկության համաձայն՝ զինվորական* ***ծառայության հետ կապված*** *են համարվել մահացության 31 դեպքից* ***17*** *դեպքը,* ***չկապված՝ 14-ը****:*

Նշենք, որ Դատախազության կողմից որպես ծառայության հետ չկապված դասակարգված մահացության 14 դեպքերից 4-ում (3-ը՝ առողջական խնդիրների, 1-ը՝ ինքնասպանության հետևանքով) զինծառայողները գտնվել են տանը, 2 դեպքում (1-ը առողջական խնդրի, 1-ը դժբախտ պատահարի՝ տրակտորի շրջվելու հետևանքով)

զինծառայողները գտնվել են ազատ հերթափոխում (ընդ որում՝ նրանցից 1-ը՝ նորից տանը), 2 դեպքում զինծառայողները վթարի են ենթարկվել քաղաքացիական/անձնական մեքենայով, 4 (առողջական խնդրով) զինծառայողի մահվան դեպքն արձանագրվել է բժշկական կենտրոններում, սակայն հայտնի չէ, թե որտեղից են տեղափոխվել բժշկական կենտրոն՝ տնի՞ց, ազատ հերթափոխում գտնվելու, թե՞ զինծառայության վայրից: Զինծառայության հետ չկապված մահվան 2 դեպքերում (1-ը դժբախտ պատահարի՝ մեքենայում բռնկված հրդեհի հետևանքով, 1-ը՝ ինքնասպանության) զինծառայողները գտնվել են տարբեր համայնքների վարչական տարածքներում: Մասնավորապես՝ 1 դեպքում զինծառայողը գտնվել է այլ անձի վարած մեքենայում, որը հրդեհվել է Արմավիր-Երևան ավտոմայրուղու Զվարթնոց գյուղի հատվածում, մյուս դեպքում՝ զինծառայողի դին հայտնաբերվել է Արարատի մարզի Այգավան գյուղից դեպի Եղեգնավան գյուղ տանող ճանապարհին՝ ծառից կախված վիճակում: Նշված 2 դեպքերում էլ, չնայած զինծառայողների մահվան դեպքերը Դատախազությունը դասակարգել է որպես ծառայության հետ չկապված, հստակ հայտնի չէ՝ զինծառայողները դեպքի պահին համարվել են զինծառայության մեջ, թե՞ ոչ:

ՀՀ քննչական կոմիտեն Կազմակերպությանը տրամադրել է տեղեկություններ միայն այն **18** զինծառայողների մահվան դեպքերի մասին, որոնց կապակցությամբ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներում իրականացվում է մինչդատական վարույթ: Ի դեպ, ՀՀ ՔԿ-ի՝ Կազմակերպությանը տրամադրած տվյալներով՝ 18 զինծառայողներից 17-ի մահվան դեպքերը համարվել են զինվորական ծառայության հետ կապված, 1-ը՝ ոչ, ինչը համընկնում է ՀՀ գլխավոր դատախազության տվյալներին՝ զինծառայության հետ կապված 17 և չկապված 1 մահվան դեպքի առումով:

Հարկ է նշել, որ չնայած ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2020 թ.-ի 1-ին և 2-րդ եռամսյակներում ՀՀ ՔԿ-ին հասցեագրված տեղեկատվության հարցմամբ պահանջվել էր տեղեկություն թե՛ զինծառայության հետ կապված, թե՛ չկապված մահացության դեպքերի վերաբերյալ, այնուամենայնիվ, 1-ին եռամսյակի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ՔԿ-ը տրամադրել է տվյալներ միայն ծառայության հետ կապված զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ, իսկ 2020 թ.-ի 2-րդ եռամսյակի նույնաբովանդակ հարցմանը՝ ծառայության հետ կապված մահացության դեպքերից բացի, ՀՀ ՔԿ-ի կողմից տրամադրվել են մանրամասներ ծառայության հետ կապ չունեցող միայն 1 զինծառայողի մահվան դեպքի վերաբերյալ: Հիշեցնենք, որ ***ՀՀ զինվորական դատախազության կողմից*** զինծառայողների մահացության դեպքերը ծառայության հետ կապված կամ չկապված դասակարգելիս ***«…հաշվի են առնվում իրադրությունը, դեպքի կոնկրետ հանգամանքները և մահվան պատճառի առնչությունը՝ ծառայողական պարտականությունների կատարման հետ»***:

*Իսկ ըստ **ՀՀ քննչական կոմիտեի** կողմից դեպքերը զինվորական ծառայության հետ կապված ու չկապված դասակարգելիս՝ նշվում է՝ «…յուրաքանչյուր դեպքով վարույթն իրականացնող քննիչի կողմից դեպքի հանգամանքների բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ ուսումնասիրության և քննության արդյունքում հաստատված փաստական տվյալների*

հիման վրա է միայն հետևություն արվում՝ զինծառայության հետ մահվան դեպքի կապված լինելու կամ չլինելու հանգամանքը»:

2020 թ.-ի հունիսի 29-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ***ՀՀ պաշտպանության նախարարությանը*** *հասցեագրված գրության պատասխանը չի ստացվել օրենքով սահմանված ժամկետում: Գրությունն ուղարկելուց հետո անցել է գրեթե 1 ամիս, այն դեպքում, երբ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված է 5-օրյա ժամկետ՝ տեղեկատվության հարցումներին պատասխանելու համար:*

ԱՀ/ԼՂ - Ադրբեջան շփման գծում հրադադարի ռեժիմի խախտումների և կրակոցների վերաբերյալ տեղեկություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ուսումնասիրում է նաև ԱՀ/ԼՂ՝ Ադրբեջանի հետ շփման գծում հրադադարի ռեժիմի խախտումների և կրակոցների վիճակագրությունը: Վերոնշյալ տվյալները հրապարակվում են ԱՀ/ԼՂ ՊՆ-ի պաշտոնական կայքում[4]:

Հայաստանի և Ադրբեջանի շփման գծում հրադադարի ռեժիմի խախտման քանակի վերաբերյալ տեղեկությունը հասանելի չէ, քանի որ այն չի հրապարակվում ՀՀ ՊՆ-ի պաշտոնական կայքում: Իսկ հրադադարի ռեժիմի խախտման թվի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2019 թ.-ի վերջին ՀՀ ՊՆ-ին հասցեագրված հարցմանն ի պատասխան՝ տեղեկության տրամադրումը մերժվել է՝ «ՀՀ ՊՆ համակարգի գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը հաստատելու մասին» N9 հրամանի 17-րդ գլխի 42-րդ կետի վկայակոչմամբ:

Ստորև ներկայացվում են 2019 և 2020 թվականների 1-ին կիսամյակների ընթացքում ԱՀ/ԼՂ՝ Ադրբեջանի հետ շփման գծում հրադադարի ռեժիմի խախտման, արձակված կրակոցների և դրանց հետևանքով մահացության դեպքերի մասին Կազմակերպության ուսումնասիրությունների արդյունքները *(տե՛ս գծապատկեր 3):*

Գծապատկեր 3 . 2019 և 2020 թթ. 1-ին կիսամյակում հրադադարի ռեժիմի խախտման, արձակված կրակոցների քանակը և դրանց հետևանքով մահացության դեպքերի թիվը.

[4] http://nkrmil.am/



Նկատենք, որ 2019 թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ, 2020 թ.-ի նույն ժամանակահատվածում ԱՀ/ԼՂ-ում նվազել է թե՛ հրադադարի ռեժիմի խախտումների (1335-ով), թե՛ կրակոցների թիվը (17050-ով):

*Ինչպես արդեն նշվեց, **այս տվյալները ներկայացնում են միայն ԱՀ/ԼՂ և Ադրբեջանի շփման գծում արձանագրված հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը:** 2020 թ.-ի 1-ին կիսամյակում հրադադարի **ռեժիմի խախտման** հետևանքով արձանագրված մահացության **1 դեպքը գրանցվել է ՀՀ տարածքում:***

Հարկ ենք համարում նշել, որ չնայած 2020 թ.-ի 1-ին կիսամյակում ԱՀ/ԼՂ և Ադրբեջանի սահմանին հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը նվազել են, 2020 թ.-ի հուլիսի 12-ից սկսած Հայաստանի և Ադրբեջանի սահմանին՝ ՀՀ Տավուշի մարզի ուղղությամբ արձանագրվեց իրավիճակի կտրուկ սրացում[5], որը հանգեցրեց ոչ միայն նյութական մեծ վնասների, այլև 2 երկրների զինված ուժերի զինծառայողների մահվան դեպքերի:

Ընդհանուր առմամբ, սահմանին խիստ լարված և սրված իրավիճակը շարունակվել է 4 օր՝ հուլիսի 12-ից մինչև հուլիսի 16-ը, որից հետո ՀՀ ՊՆ-ի մամուլի խոսնակի կողմից պարբերաբար տարածվել է տեղեկություն՝ սահմանին հարաբերական անդորրի պահպանման վերաբերյալ:

2020 թ.-ի հուլիսին Հայաստանի և Ադրբեջանի սահմանին արձանագրված դեպքերին՝ դիվերսիոն ներթափանցումների փորձերին, արձակված կրակոցներին, կիրառված զինատեսակներին և մահացության դեպքերին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կանդրադառնա հաջորդ տեղեկանքում՝ 2020 թ.-ի հոկտեմբերին:

2020 թ.-ի 1-ին կիսամյակում զինծառայողների մահվան փաստերով հարուցված քրեական գործերի բաշխումն՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների

[5] https://www.facebook.com/shushanstepanyan/posts/3045065262196280

Ըստ առկա՝ պաշտոնապես և ԶԼՄ-ներով տարածված տվյալների, 2020 թ.-ի 1-ին կիսամյակում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացության **31 դեպքերից 18-ի փաստով հարուցվել են քրեական գործեր՝** հետևյալ հոդվածներով.

- **6-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 2 հոդվածներով՝ 376-րդ հոդվածի 2-րդ մասով և 315-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև պաշտոնեական անփութությունը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,
- **5-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով, սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով՝ սպանություն՝ խուլիգանական դրդումներով[6]
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում[7],
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 2 հոդվածներով՝ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով և 365-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպանություն՝ այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով, ինչպես նաև մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը:

Նշված **18** զինծառայողների մահվան փաստերով հարուցված քրեական գործերից՝

- 17-ը գտնվում են **նախաքննության** փուլում,
- Մահվան 1 դեպքի փաստով (դժբախտ պատահարի՝ ձորն ընկնելու հետևանքով) հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ քրեական

[6] Տվյալը՝ ՀՀ գլխավոր դատախազության: Նույն դեպքի փաստով ՀՀ ՔԿ կողմից տեղեկացվել է, որ հարուցվել է քրեական գործ 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը

[7] Տվյալը՝ ՀՀ գլխավոր դատախազության: Նույն դեպքի առթիվ՝ ըստ ՀՀ ՔԿ կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ ինքնասպանության հասցնելը

դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Մահվան 4 դեպքով (3-ը՝ առողջական խնդիրների, 1-ը՝ ինքնասպանության հետևանքով) քրեական գործի հարուցումը մերժվել է: Նշված դեպքերը ՀՀ գլխավոր դատախազության կողմից համարվել են զինվորական ծառայության հետ չկապված մահվան դեպքեր:

1 դեպքով (դժբախտ պատահարի՝ տրակտորի շրջվելու հետևանքով) դեռևս նախապատրաստվում են նյութեր: Նշված դեպքը ՀՀ գլխավոր դատախազության կողմից համարվել է զինվորական ծառայության հետ չկապված մահվան դեպք:

8 դեպքով հայտնի չէ՝ արդյո՞ք հարուցվել են քրեական գործեր, թե ոչ, և եթե հարուցվել են, ապա ՀՀ քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածներով: Դրանցից՝

- 6-ով (3-ը առողջական խնդիրների, 1-ը՝ ավտովթարի, 1-ը՝ ինքնասպանության, 1-ը՝ դժբախտ պատահարի՝ մեքենայում բռնկված հրդեհի հետևանքով) վարույթներն իրականացվել են ՀՀ ՔԿ-ի, ՀՀ ոստիկանության կամ ԼՂ/ԱՀ ոստիկանության տարբեր վարչությունների կողմից:
- 2 դեպքով (առողջական խնդիրներ), ընդհանրապես, հայտնի չէ վարույթ իրականացնող մարմնի մասին:

Նշված 8 մահվան դեպքերը ՀՀ գլխավոր դաըախազությունը համարել է զինծառայության հետ չկապված:

- **Նշենք, որ 2020 թ.-ի 1-ին կիսամյակում զինծառայողներից մեկի մահվան փաստով հարուցված քրեական գործի հոդվածը փոխվել է:** Այսպես, զինծառայողի մահվան փաստով ի սկզբանե հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով[8] (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում), սակայն հետագայում քրեական գործը վերաորակվել է, քանի որ պարզվել է, որ զինծառայողին մահացու հրազենային վնասվածք է հասցվել ծառայակցի կողմից, ով կալանավորվել է ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը) և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով (սպանություն՝ այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով) նախատեսված հանցանք կատարելու հիմքով[9]:
- Բացի այդ, հարկ է անդրադառնալ ևս 1 զինծառայողի մահվան փաստով հարուցված քրեական գործին, երբ 2 տարբեր պաշտոնական աղբյուրներ (ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե) տրամադրել են միմյանցից տարբերվող տվյալներ: Այսպես, 1 զինծառայողի մահվան փաստով, ըստ ՀՀ գլխավոր դատախազության կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրված տեղեկության, հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական

[8] http://investigative.am/news/view/zinvori-mah11.html
[9] http://investigative.am/news/view/zivori-mah.html

օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով՝ սպանություն՝ խուլիգանական դրդումներով, սակայն նույն զինծառայողի մահվան փաստով, ըստ ՀՀ քննչական կոմիտեի կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրված տեղեկության, հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը, սակայն ՀՀ ՔԿ-ի տվյալներով՝ քրեական գործի շրջանակներում զինծառայողի ծառայակիցը ձերբակալվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու կասկածանքով (սպանություն՝ խուլիգանական դրդումներով):

Աղյուսակ 3-ում ներկայացվում է 2020 թ.-ի 1-ին կիսամյակում զինված ուժերում մահացության դեպքերի ամփոփ տեղեկությունը:

Աղյուսակ 3. 2020 թ.-ի 1-ին կիսամյակում մահացության դեպքերի վերաբերյալ մանրամասն տեղեկություն

Հ/Հ	Անուն Ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարածաշրջան	Դեպքի վայրը	Տեղ. տարածման առաջնային աղբյուրը/ հետագայում հաստատող անձը, կառույցը	Քր. գործ հարուցող	ՀՀ քր. օրենսգրքի որ հոդվածով	Քր. գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1	Արտյոմ Ղազարյան	01.01.2020թ.	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ ՊՆ հյուսիս-արևելյան ուղղությամբ տեղակայված ստորաբաժանում	ԱՀ/ԼՂ ՊՆ	3-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս, ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մաս	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ, Պաշտոնեական անփութությունը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Առողջական խնդիրներ	Նախաքննություն
2	Հայկ Բարսեղյան	03.01.2020թ.	ՀՀ	Հայտնի չէ	ԶԼՄ՝ հղումով դատախազության գրությանը	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի կողմից	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Առողջական / Ինքնազգացողության վատացման հետևանքով	Քրեական գործի հարուցումը մերժվել է
3	Կարեն Դարբինյան	03.01.2020թ.	ՀՀ	«Գր. Լուսավորիչ» ԲԿ	ԶԼՄ՝ հղումով դատախազության գրությանը	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Առողջական / Ինքնազգացողության վատացման հետևանքով	Քրեական գործի հարուցումը մերժվել է

						Նոր Նորքի բաժնի կողմից				
4	Գեղամ Խաչատրյան	06.01.2020թ.	ՀՀ	ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրք	ՀՀ ՔԿ	6-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնել	Ինքնասպան ություն	Նախաքննություն
5	Արթուր Նալբանդյան	21.01.2020թ.	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԱՀ/ԼՂ ՊՆ	3-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ	Դժբախտ պատահար/ ընկել է ձորը	Քր. գործի վարույթը կարճվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով
6	Վահրամ Ավագյան	30.01.2020	ԱՀ/ԼՂ	ՊԲ կենտրոնական ենթակայությամբ գործող զորամասերից մեկ	ԱՀ/ԼՂ ՊՆ	3-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ	Ինքնասպան ություն	Նախաքննություն

								կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնել		
7	Կարապետ Նազարյան	07.02.2020թ.	ՀՀ	Սյունիքի մարզ	ՀՀ ՊՆ	9-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ	Դժբախտ պատահար/ ձնահյուս	Նախաքննություն
8	Տիգրան Արզումանյան	07.02.2020թ.	ՀՀ	Սյունիքի մարզ	ՀՀ ՊՆ	9-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր	Դժբախտ պատահար/ ձնահյուս	Նախաքննություն
9	Նվեր Շահբազյան	07.02.2020թ.	ՀՀ	Սյունիքի մարզ	ՀՀ ՊՆ	9-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ	Դժբախտ պատահար/ ձնահյուս	Նախաքննություն
10	Վալերի Պետրոսյան	09.02.2020թ.	ԱՀ/ԷՂ	ՊԲ 59703 զորամաս	ԱՀ/ԷՂ ՊՆ	2-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ	Առողջական խնդիրներ/ Հանկարծամ ահ/	Նախաքննություն
11	Տիգրան Մանվելյան	12.02.2020թ.	ԱՀ/ԷՂ	ՊԲ 384001 զորամաս	ԱՀ/ԷՂ ՊՆ	2-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությո ւնը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ	Ինքնասպան ություն	Նախաքննություն

								ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնել		
12	Տիգրան Մխոյան	12.02.2020թ.	ԱՀ/ԼՂ	ՊԲ 59703 զորամաս	ՀՀ ՊՆ մամուլի խոսնակի ՖԲ էջ	2-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնել	Ինքնասպան ություն	Նախաքննություն
13	Հայկ Ասրյան	14.02.2020թ.	ԱՀ/ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԱՀ/ԼՂ ՊՆ	2-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնել	Ինքնասպան ություն	Նախաքննություն
14	Նարեկ Հովակիմյան	06.03.2020թ.	ՀՀ	Երևանի Իսակովի պողոտա, Արգանդ գյուղի խաչմերուկի մոտակայք	ԶԼՄ	ՀՀ ՔԿ ՃՏՊ քննության բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մաս	Ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման	Ավտովթար/ քաղաքացի ական մեքենայով	Նախաքննություն

								կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ		
15	Զոհրաբ Սիանոսյան	10.03.2020թ.	ՀՀ	ՀՀ հարավարևելյան հատ. զորամասի պահպ. շրջ մարտական դիրք	ՀՀ ՊՆ	8-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռ. Շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
16	Ալեքսանդր Թազագուլյան	21.03.2020թ.	ՀՀ	«Էրեբունի» ԲԿ	Տեղեկություն չի տարածվել	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Առողջական	Քրեական գործի հարուցումը մերժվել է
17	Գարեգին Բաբակեխյան	03.04.2020թ.	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ ՊԲ հարավ-արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԱՀ/ԼՂ ՊՆ	2-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետ և ՀՀ քրեական օրենսգրքի 365 հոդվածի 1-ին մաս (ի սկզբանե քր. գործը հարուցվել էր ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով,ապա վերաորակվել է)	1. Սպանություն՝ այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով 2. Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը	Սպանությու ն/ այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելո ւ նպատակով	Նախաքննություն
18	Ռաֆիկ Ավետիսյան	11.04.2020թ.	ՀՀ	Արարատի մարզ, Այգավան գյուղից դեպի Եղեգնավան գյուղ տանող ճանապարհ	ԶԼՄ	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Քրեական գործի հարուցումը մերժվել է	Ինքնասպան ություն	Քրեական գործի հարուցումը մերժվել է
19	Տարոն Պողոսյան	04.05.2020թ.	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված	ԱՀ/ԼՂ ՊՆ	2-րդ կայազորայի ն քննչական	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-	Անփույթ վերաբերմունքը ծառայության	Ականի պայթյուն	Նախաքննություն

				զորամասերից մեկ		բաժին	րդ մաս	նկատմամբ, անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ		
20	Սասուն Մարգարյան	10.05.2020թ.	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԱՀ/ԼՂ ՊՆ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ (ՀՀ ՔԿ տվյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ ինքնասպանություն)	Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում	Ինքնասպանություն	Նախաքննություն
21	Հենրիկ Արամյան	19.05.2020թ.	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	ԱՀ/ԼՂ ՊՆ	1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետ (ՀՀ ՔԿ տվյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մաս՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը)	Սպանություն՝ խուլիգանական դրդումներով	Սպանություն/ խուլիգանական դրդումներով	Նախաքննություն
22	Հովիկ Քոսակյան	20.05.2020թ.	ՀՀ	Արմավիր-Երևան ավտոմայրուղու՝ Զվարթնոց գյուղի հատվածում	ԶԼՄ՝ հղումով դատախազությանը	Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը	Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը	Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը	Դժբախտ պատահար/ հրդեհ մեքենայում	Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը
23	Խաչիկ Բաղալյան	24.05.2020թ.	ՀՀ	«Էրեբունի» ԲԿ	ԶԼՄ՝ հղումով դատախազությանը	Վարույթն իրականացր	Վարույթն իրականացրել է	Վարույթն իրականացրել է ՀՀ	Առողջական խնդիրներ	Վարույթն իրականացրել է

						ել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը	ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը	ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը		ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը
24	Վազգեն Մարգարյան	02.06.2020թ.	ՀՀ	«Գր. Լուսավորիչ» ԲԿ	Տեղեկություն չի տարածվել	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական խնդիրներ	Հայտնի չէ
25	Սարգիս Ղուլյան	03.06.2020թ.	ԱՀ/ԼՂ	Մատաղիս-Մարտակերտ ավտոճանապարհի 17 կմ հատված	ԱՀ/ԼՂ ՊՆ	3-րդ կայազորայի ն քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մաս	Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը,ո րն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Ավտովթար/ ՊՆ մեքենայով	Նախաքննություն
26	Մարիամ Դավթյան	04.06.2020թ.	Հայտնի չէ	Տանը	Տեղեկություն չի տարածվել	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական խնդիրներ	Հայտնի չէ
27	Սևանա Խաչատրյան	06.06.2020թ.	ՀՀ	Տանը	Տեղեկություն չի տարածվել	Վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժինը	Վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժինը	Վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժինը	Առողջական խնդիրներ	Վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժինը
28	Արամ Անանյան	12.06.2020թ.	ՀՀ	Տանը	Տեղեկություն չի տարածվել	Վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժինը	Վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժինը	Վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժինը	Առողջական խնդիրներ	Վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժինը
29	Էրիկ Ղազարյան	18.06.2020թ.	ԱՀ/ԼՂ	Հայտնի չէ	Տեղեկություն չի տարածվել	Վարույթն իրականացրել է ԱՀ	Վարույթն իրականացրել է ԱՀ Ասկերանի	Վարույթն իրականացրել է ԱՀ Ասկերանի	Ավտովթար/ սեփական մեքենայով	Վարույթն իրականացրել է ԱՀ Ասկերանի

						Ասկերանի ոստիկանության շրջանային քննչական բաժինը	ոստիկանության շրջանային քննչական բաժինը	ոստիկանության շրջանային քննչական բաժինը		ոստիկանության շրջանային քննչական բաժինը
30	Սամվել Աբգարյան	27.06.2020թ.	ՀՀ	Տան հարակից խոհանոցում՝ կախված	Տեղեկություն չի տարածվել	Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վարդենիսի քննչական բաժինը	Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վարդենիսի քննչական բաժինը	Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վարդենիսի քննչական բաժինը	Ինքնասպանություն	Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վարդենիսի քննչական բաժինը
31	Հակոբ Բաբասյան	28.06.2020թ.	ՀՀ	Տավուշի մարզ, Բերդ համայնքի Արծվաբերդ բնակավայրի «Թագավորանց» կոչվող թաղամաս	ԶԼՄ	ՀՀ ՔԿ 6-րդ կայազորայի ն քննչական բաժին	Նախապատրաստվում են նյութեր	Նախապատրաստվում են նյութեր	Դժբախտ պատահար/ տրակտորի շրջվելու հետևանքով	Նախապատրաստվում են նյութեր

2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ԵՎ ԱՀ/ԼՂ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. Զոհրաբ Սիանոսյան

2020 թ.-ի մարտի 10-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, ՀՀ հարավարևմտյան հատվածում տեղակայված ՀՀ ՊՆ-ի զորամասերից մեկի պահպանության շրջանի մարտական դիրքի ուղղությամբ ադրբեջանական ԶՈՒ-ի արձակած կրակոցի հետևանքով կրծքավանդակի շրջանում հրազենային վնասվածքից մահացել է պայմանագրային զինծառայող, շարքային Զոհրաբ Գրիգորիի Սիանոսյանը[10]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերով: Կատարվում է նախաքննություն[11]:

Բ.Ինքնասպանություն
Զինվորական ծառայության հետ կապված

1. Գեղամ Խաչատրյան

2020 թ.-ի հունվարի 6-ին, ՀՀ ՊՆ զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում, պայմանագրային զինծառայող Գեղամ Վիկտորի Խաչատրյանն իրեն կցված գնդացրից կրակոց է արձակել՝ իրեն պատճառելով մահացու հրազենային վիրավորում[12]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը: Կատարվում է նախաքննություն:

2. Վահրամ Ավագյան

2020 թ.-ի հունվարի 30-ին, ԱՀ/ԼՂ ՊԲ կենտրոնական ենթակայությամբ գործող զորամասերից մեկում, ՊԲ-ի ժամկետային զինծառայող Վահրամ Մկրտիչի Ավագյանը, ըստ ԱՀ/ԼՂ ՊՆ մամուլի ծառայության տարածած հաղորդագրության, իրեն ամրակցված

[10] http://mil.am/hy/news/7573
[11] http://investigative.am/news/view/zohrab-sinosyan.html
[12] http://investigative.am/news/view/gexam-xachatryan.html

ԱԿՄ տեսակի ինքնաձիգից կրակոց է արձակել իր կրծքավանդակի շրջանում և տեղափոխվել զինվորական հոսպիտալ, որտեղ ժամը 14:00-ին մահացել է[13]*:*

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել քրեական գործ: Կատարվում է նախաքննություն:

Վահրամ Ավագյանի հարազատները չեն հավատում ինքնասպանության վարկածին: Դեպքի օրը զինծառայողի եղբայրը 2 անգամ խոսել է նրա հետ. 1-ին անգամ՝ առավոտյան ժամը 10-ի շրջանում, 2-րդ անգամ՝ դեպքից 1 ժամ առաջ: Նա արտառոց ոչինչ չի նկատել եղբոր հետ խոսելիս:

Փետրվարի 2-ին զինծառայողի հարազատները Արմավիր-Երևան մայրուղով երթ են կազմակերպել՝ ցանկանալով զինծառայողի դին տանել Երևան: ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը ճանապարհին հանդիպել է վերջիններիս հետ, հայտնել մանրամասներ քրեական գործից և խնդրել դադարեցնել երթը[14]:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեպքը տեղի է ունեցել զինակիցների առջև[15]:

auroranews լրատվամիջոցի տվյալներով՝ զորամասը, ուր ծառայում էր Վահրամ Ավագյանը, տեղակայված է Ստեփանակերտից ոչ հեռու և համարվում է «էլիտար» զորամաս: Այնտեղ ծառայում են մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների որդիներ, ովքեր զորամասում ձևավորել են «կլան» և ճնշում են գործադրում զինծառայակիցների նկատմամբ: Նշված խմբում են ԱԱԾ հակահետախուզության գլխավոր վարչության պետ, գեներալ Եսայի Մկրտչյանի որդին՝ Ռուբեն Մկրտչյանը, նախկին պատգամավոր Առաքել Մովսիսյանի (Շմայսի) որդին՝ Դավիթ Մովսիսյանը, ԱՀ/ԼՂ ՊԲ արդեն իսկ նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Կարեն Աբրահամյանի որդին, ԱԱԾ պաշտոնյա Կարեն Սահակյանի որդին՝ Հակոբ Սահակյանը, ոմն զինծառայող Արայիկ Սարգսյանը, ով զբաղվում է դրամահավաքությամբ, զինծառայողներից նոր համազգեստները վերցնելով և զորամասի ներսում վաճառելով[16]:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը նշված հրապարակման առնչությամբ 2020թ.-ի փետրվարի 5-ին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին՝ նշված «էլիտար» զորամասում տիրող իրավիճակի կապակցությամբ ծառայողական քննություն իրականացնելու պահանջով: 2020 թ.-ի ապրիլի 8-ին Կազմակերպությունում ստացվել է ՀՀ ՊՆ 2020թ.-ի մարտի 30-ի պատասխանը, որով տեղեկացվել է, որ դիմումի մեջ նշված դեպքերի առնչությամբ իրականացված ծառայողական քննությունների արդյունքում 13 պաշտոնատար անձինք ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Այլ մանրամասներ ՊՆ-ը չի տրամադրել այն պատճառաբանությամբ, որ դեպքերի առնչությամբ հարուցված քրեական գործերը նախաքննության փուլում են և գործի

[13] http://nkrmil.am/news/view/2659, http://yerkirmedia.am/low/qnnchakan-zincarayogh-mah/
[14] https://news.am/arm/news/557971.html?fbclid=IwAR2APixhM1EpXomwYO_1EV3nNFraNHIugsJjUQKvwduQCJkw-1AM7mPEd1M
[15] https://armlur.am/964632/
[16] https://www.auroranews.am/news/2020-02-03-hetaqnno%D6%82tyo%D6%82n-artsakhi-elitar-zoramasy-bardzrastichan-pashtonyaneri-ordinern-u-inqnaspanutyan-depqery-ushagrav-manramasner

վերաբերյալ ցանկացած տեղեկություն կարող է դիտարկվել որպես նախաքննության գաղտնիք:

Ըստ tert.am[17] կայքին հայտնի դարձած տեղեկությունների՝ հունվարի 30-ի առավոտյան զորամասի 2-րդ ռեակտիվ հրետանային դիվիզիոնի անձնակազմն ստացել է հաստիքային զենքերը և նախապատրաստվել մեկնելու բանակի ուսումնական կենտրոն՝ պլանավորված մարտական հրաձգությամբ կրակային վարժությունը կատարելու համար: Սակայն մինչ այդ շարքայիններ Վահրամ Ավագյանի և Դավիթ Մովսիսյանի միջև զորանոցի հարակից ծխարանում տեղի է ունեցել վիճաբանություն: Դավիթ Մովսիսյանը հանդիմանել է շարքային Վահրամ Ավագյանին զենքն անզգուշաբար իր կողմն ուղղելու պատճառով: Դրանից հետո զինվորները վիճել են, հայհոյանքներ հնչեցրել, տեղի է ունեցել քաշքշոց, ինչին միջամտել են զորամասի այլ ծառայողներ: Միջադեպը կանխվել է զորամասում «արտոնյալ» կարգավիճակ ունեցող զինծառայող Արայիկ Սարգսյանի միջամտությամբ, որը Դավիթ Մովսիսյանի հովանավորյալն է:

Վիճաբանությունից հետո Արայիկ Սարգսյանը որոշել է պարզաբանումներ ստանալ տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ: Ըստ լրատվամիջոցի տեղեկությունների՝ Վահրամ Ավագյանն այդ միջադեպից հետո ճնշված է եղել և մտավախություն ունեցել սպասվող պարզաբանումից:

Սակայն, այդ օրը մեկ այլ միջադեպ է գրանցվել Դավիթ Մովսիսյանի մասնակցությամբ. կրակադաշտ մեկնելիս՝ Դավիթ Մովսիսյանը մեքենայի նստարանից վայր է ընկել, ինչն առաջացրել է ծառայակիցների ծիծաղը: Մովսիսյանը վերջիններիս հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել, իսկ իր մտերիմներից Խաչիկ Գասպարյանին հասկացրել, որ վիրավորանքներն ուղղված էին իր «չուզողներին»: Վահրամ Ավագյանը մտածել է, որ ակնարկն իրեն է ուղղված:

Զորամասի սպաներից մայոր Գ. Գևորգյանը հրաձգարանում ժամը 13:00-ի սահմաններում կրակոցների ձայն է լսել, և ղեկավարման կետից դուրս գալով՝ տեսել է շարքային Վահրամ Ավագյանին, որը հայհոյելով և կրակոց արձակելով շարժվում էր համածառայակիցների ուղղությամբ: Վերջինս փորձել է հանգստացնել Ավագյանին՝ համոզելով, որ վայր դնի զենքը, սակայն Ավագյանը զենքն ուղղել է դեպի նա և հորդորել, որ չմոտենա: Այնուհետև Ավագյանն առաջ է շարժվել՝ շարունակելով անկանոն կրակոցներ արձակել տարբեր ուղղություններով:

Ստեղծված իրադրությանն անմիջապես իր մասնակցությունն է ցուցաբերել ՌՀԴՆ-ի հրամանատարի՝ ԲՀԱ գծով տեղակալ, մայոր Խ. Ա.-ն: Լսելով կրակոցի ձայնը՝ նա շարժվել է այդ ուղղությամբ, փորձել թիկունքից մոտենալ Ավագյանին և վնասազերծել նրան, սակայն վերջինս նկատել է նրան և զենքն ուղղել դեպի նա՝ հորդորելով, որ հեռանա:

Այնուհետև, ըստ Խ. Ա.-ի պատմածի, Ավագյանը, կրակահերթ է արձակել դիտաշտարակի լեյտենանտ Վ. Վ.-ի ու Խաչիկ Գասպարյանի ուղղությամբ:

Մայոր Խ. Ա.-ն շարունակել է հորդորել Ավագյանին, որ վերջինս դադարեցնի իր գործողությունները, զենքը վայր դնի և հանդարտվի, միևնույն ժամանակ շարունակելով

[17] https://www.tert.am/am/news/2020/02/22/details/3217668

հետևել նրան: Սակայն, անսպասելիորեն Ավագյանը զենքը բարձրացրել է իր կրծքավանդակի ուղղությամբ և արձակել 2 կրակոց: Նրան սանիտարական մեքենայով տեղափոխել են Իվանյանի զինվորական հոսպիտալ, որտեղ էլ զինծառայողը մահացել է:

Միջադեպի վերաբերյալ զինծառայողները, գրեթե, նույնաբովանդակ բացատրություններ են տվել՝ նշելով, որ Ավագյանը կրակոցներ արձակելով և հայհոյանքներ հնչեցնելով՝ շարժվել է Դավիթ Մովսիսյանի ուղղությամբ:

Պարտադիր ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Դավիթ Մովսիսյանին, Խաչիկ Գասպարյանին և Արայիկ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով («Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը՝ նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն առաջացրել է ծանր հետևանքներ») և նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Կրտսեր սերժանտ Սպարտակ Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել հրամանատարության հսկողությանը հանձնելը:

Զինծառայողի մահվան դեպքի հանգամանքները պարզելու համար անցկացված ծառայողական քննության արդյունքներով որոշում է կայացվել մի շարք ավագ սպաների, այդ թվում՝ զորամասի հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալին և դիվիզիոնի հրամանատարին զորացրել զինված ուժերի շարքերից: Խիստ կարգապահական տույժերի են ենթարկվել զորամասի հրամանատարն ու նրա տեղակալները, իսկ որոշ պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվել է պաշտոնի իջեցում[18]:

Վահրամ Ավագյանը Արմավիրի մարզի Հայթաղ համայնքից էր: Նա 6 ամսվա զինծառայող էր[19]:

3. Տիգրան Մանվելյան

2020 թ.-ի փետրվարի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հրազենային վնասվածքից մահացել է ՊԲ ժամկետային զինծառայող, 2000թ.-ին ծնված Տիգրան Մանվելի Մանվելյանը[20]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով[21]: Կատարվում է նախաքննություն:

Տիգրան Մանվելյանը Լոռու մարզի Տաշիր քաղաքից էր[22]:

4. Տիգրան Միսոյան

[18] http://nkrmil.am/news/view/2670
[19] https://www.auroranews.am/news/2020-02-01-eghbors-marminy-cheng-hugharkavorelu-minchev-ardar-qnnutyun-chtarvi-mahatsats-zinvori-eghbayr
[20] http://nkrmil.am/news/view/2676
[21] https://armeniasputnik.am/armenia/20200213/22037379/zintsaraoxneru-mahvan-depqerov-qrqortser-en-harucvel-inqnaspanutyan-hascnelu-hodvatsov.html
[22] http://armdaily.am/?p=80252&l=am%2F&fbclid=IwAR3WEdhujcsvYoi5iDY4HEata0oXVPN5pdU3ZIRN61h1wTOeG77hZ7ij17U

2020 թ.-ի փետրվարի 12-ին՝ ժամը 13:00-ի սահմանում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում գլխի շրջանում ստացած հրազենային վնասվածքից մահացել է ՊԲ ժամկետային զինծառայող Տիգրան Հուսիկի Մխոյանը[23]:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տարածած տեղեկության՝ Տիգրան Մխոյանը կրտսեր սերժանտ էր: Նա մահացել է զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով[24]: Կատարվում է նախաքննություն:

Տիգրան Մխոյանը Երևանից էր: Զինծառայության էր զորակոչվել 2018 թ.-ի ձմռանը[25]:

5. Հայկ Ասրյան

2020 թ.-ի փետրվարի 14-ին՝ ժամը 19:00-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հրազենային վնասվածքից մահացել է սպա Հայկ Ներսեսի Ասրյանը[26]:

ՀՀ քննչական կոմիտեի տվյալներով՝ լեյտենանտ Հայկ Ներսեսի Ասրյանի մահվան փաստով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով[27]:

Զինծառայողը Սյունիքի մարզի Գորիս քաղաքից էր: Սովորել էր Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում[28]: 3 տարով պայմանագիր է ունեցել ՊՆ-ի հետ, որից ծառայել էր միայն կեսը:

Զինծառայողի հարազատները լրատվամիջոցներից մեկի հետ զրույցում հայտնել են, որ նա ծառայության ընթացքում խնդիր չի ունեցել և միշտ զորամասից գոհ է եղել: Զինծառայողների հարազատներից մեկը հայտնել է, որ իրենք չեն հավատում ինքնասպանության վարկածին, նշելով, որ Հայկ Ասրյանը բազմաթիվ ծրագրեր և նպատակներ ուներ:

Հարազատի խոսքերով՝ դեպքը տեղի է ունեցել մարտական դիրքեր բարձրանալու օրը: Զինծառայողը, վերջին անգամ մոր հետ խոսելով, հայտնել է, որ լավ է, բայց «խառն է», հավելելով, որ հետո կզանգի:

Զինծառայողի մահվան մասին առաջինը տեղեկացել է նրա հայրը՝ համացանցից[29]:

6. Սասուն Մարգարյան

[23] http://nkrmil.am/news/view/2677
[24] https://armeniasputnik.am/armenia/20200213/22037379/zintsaraoxneru-mahvan-depqerov-qrqortser-en-harucvel-inqnaspanutyan-hascnelu-hodvatsov.html
[25] http://armdaily.am/?p=80252&l=am%2F&fbclid=IwAR3WEdhujcsvYoi5iDY4HEata0oXVPN5pdU3ZIRN61h1wTOeG77hZ7ij17U
[26] http://nkrmil.am/news/view/2679
[27] https://armeniasputnik.am/society/20200215/22065140/arcaxum-mahacatc-spayin-inqnaspanutyan-en-hascrel-harucvel-e-qrqortc.html
[28] https://armlur.am/968444/
[29] https://galatv.am/hy/2813635/

2020թ.-ի մայիսի 10-ին ԱՀ/ԼՂ ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ-ի զինծառայող 2001թ.-ին ծնված Սասուն Սուրենի Մարգարյանը[30]:

ՀՀ ՔԿ-ի լրատվության ծառայության տարածած տեղեկության համաձայն՝ զորամասի կրակային դիրքի հարակից տարածքում պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սասուն Մարգարյանի՝ կրծքավանդակի շրջանում մահացու հրազենային վնասվածք ստանալու դեպքով, հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում)[31]:

Քրեական գործի շրջանակներում լեյտենանտ Հ.Հ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար:

Ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գ.Ս.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 359-րդ հոդվածի 1-ին մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, շորթում կատարելու և զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու համար: Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է[32]:

Նշենք, որ չնայած թե՛ ՀՀ ՔԿ-ը՝ տարածած հաղորդագրությամբ, թե՛ ՀՀ գլխավոր դատախազությունը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրած տեղեկությամբ հայտնել են, որ դեպքի փաստով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում), այդուհանդերձ, նույն՝ ՀՀ ՔԿ-ի կողմից Կազմակերպությանը տրամադրված տեղեկության համաձայն՝ զինծառայողի մահվան փաստով քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին կետով (սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը):

---

[30] http://nkrmil.am/news/view/2780

[31] https://news.am/arm/news/577849.html, հուլիսի 6-ին ՀՀ ՔԿ կողմից ՀՔԱՎ-ին տրամադրած տեղեկատվությամբ նշվել է, որ քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին կետով՝ ինքնասպանություն, մինչդեռ ՀՀ գլխավոր դատախազությունը ՀՔԱՎ-ին տեղեկացրել է, որ քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը)՝ ինչպես ի սկզբանե նշվել էր ՀՀ ՔԿ կողմից հրապարակված պաշտոնական հաղորդագրության մեջ

[32] https://forrights.am/2020/05/17/%d5%aa%d5%a1%d5%b4%d5%af%d5%a5%d5%bf%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a6%d5%ab%d5%b6%d5%ae%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b5%d5%b8%d5%b2-%d5%bd%d5%a1%d5%bd%d5%b8%d6%82%d5%b6-%d5%b4%d5%a1%d6%80%d5%a3%d5%a1%d6%80/

19-ամյա զինծառայողն Արցախի Ասկերանի շրջանի Խաչեն համայնքից էր, մոտ 11 ամսվա զինծառայող էր[33]:

Ինքնասպանություն
Զինվորական ծառայության հետ չկապված

1. **Ռաֆիկ Ավետիսյան**

2020 թ.-ի ապրիլի 11-ին, Արարատի մարզի Այգավան գյուղից դեպի Եղեգնավան գյուղ տանող ճանապարհին, հայտնաբերվել է Արարատի մարզի բնակիչ, 32-ամյա պայմանագրային զինծառայող Ռաֆիկ Ավետիսյանի դին՝ ծառից կախված վիճակում:
Արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել[34]:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմանն ի պատասխան տրամադրված տեղեկության համաձայն՝ ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Վեդու բաժնում կայացվել է որոշում քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետի (հանցագործության դեպքի բացակայության հիմքով):

2. **Սամվել Աբգարյան**

2020թ.-ի հունիսի 27-ին մահացած պայմանագրային զինծառայող Սամվել Աբգարյանի մահվան վերաբերյալ տեղեկություն չի տարածվել ոչ պաշտոնական աղբյուրներով, ոչ էլ լրատվամիջոցներով: Զինծառայողի մահվան մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից:

Կազմակերպությանը, մասնավորապես տեղեկացվել է, որ զինծառայողի դին հայտնաբերվել է իր տան հարակից խոհանոցում՝ կախված վիճակում:

Տեղեկացվել է նաև, որ վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վարդենիսի քննչական բաժինը: Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

Գ. Սպանություն
Այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով

1. **Գարեգին Բաբակեխյան**

2020թ.-ի ապրիլի 3-ին ԱՀ/ԷՂ ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ-ի ժամկետային զինծառայող, 2000թ.-ին ծնված Գարեգին Կամոյի Բաբակեխյանը[35]:

[33] https://news.am/arm/news/577856.html
[34] https://news.am/arm/news/572025.html
[35] http://nkrmil.am/news/view/2733

Զինծառայողը վնասվածքն ստացել է կզակի շրջանում: Փաստի առթիվ նախ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով[36] (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում), սակայն հետագայում քրեական գործը վերարակվել է, քանի որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ զինծառայողին մահացու հրազենային վնասվածք է հասցվել ծառայակցի՝ ժամկետային զինծառայող, շարքային Արսեն Պետրոսյանի կողմից՝ վերջինիս ամրակցված ԱԿ-74 տեսակի ինքնաձիգով: Վերջինս, որպես կասկածյալ, ձերբակալվել է, ապա կալանավորվել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը) և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով (սպանություն՝ այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով) նախատեսված հանցանք կատարելու հիմքով[37]:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հարուցված քրեական գործով իրավապահների մոտ նախնական տվյալներ են եղել, որ դիրքում նռնակ է պայթել: Ըստ նախնական վարկածի՝ Գարեգին Բաբակեխյանի մահվան գործով ձերբակալված ժամկետային զինծառայողը դիրքում հերթապահության ժամանակ մի ակնթարթ քնել է, որից հետո արթնացել է և, տեսելով Բաբակեխյանին, մտածել, թե հակառակորդն է, ու նռնակը նետել է նրա ուղղությամբ: Ավելի ուշ, տեսնելով, որ նռնակի պայթելուց վիրավորվել է իր ծառայակից ընկերը, մտածելով, որ նրա վիրավորման համար իրեն են մեղադրելու, հետքերը թաքցնելու համար վերջինս որոշել է կրակել նրան կզակի հատվածից, իբր, Գարեգին Բաբակեխյանն ինքնասպանություն է գործել: Օրաթերթի տեղեկություններով, սակայն, ձերբակալված զինծառայողը նշում է, թե նման բան չի եղել: Իսկ դեպքի պահին դիրքում գտնվող մյուս զինծառայողները իրարամերժ ցուցմունքներ են տվել[38]:

Սպանություն՝ խուլիգանական դրդումներով

1. Հենրիկ Արամյան

2020 թ.-ի մայիսի 19-ին ՊԲ-ի արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ-ի ժամկետային զինծառայող, 2000թ.-ին ծնված Հենրիկ Սամսոնի Արամյանը[39]:

Ըստ ՀՀ ՔԿ-ի տարածած հաղորդագրության՝[40] դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը): ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմանն ի պատասխան, սակայն, տեղեկացվել է, որ

[36] http://investigative.am/news/view/zinvori-mah11.html
[37] http://investigative.am/news/view/zivori-mah.html
[38] https://armlur.am/987055/
[39] http://nkrmil.am/news/view/2789
[40] http://investigative.am/news/view/henrik-aramyan.html

զինծառայողի մահվան փաստով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով (սպանություն՝ խուլիգանական դրդումներով):

Քրեական գործի շրջանակներում պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Հ.Դ.-ն ձերբակալվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված հանցանք կատարելու կասկածանքով (սպանություն՝ խուլիգանական դրդումներով)[41]:

Կատարվում է նախաքննություն:

Դ. Առողջական խնդիրներ
Ծառայության հետ կապված

1. **Արտյոմ Ղազարյան**

2020թ.-ի հունվարի 1-ին՝ ժամը 11:30-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված ստորաբաժանումներից մեկում հիվանդության հետևանքով մահացել է ՊԲ-ի ժամկետային զինծառայող, 2000թ.-ին ծնված Արտյոմ Արթուրի Ղազարյանը[42]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ 2 հոդվածով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև 315-րդ հոդվածի 2-րդ մասով՝ պաշտոնեական անփութություն, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Քրեական գործի շրջանակներում իրականացված քննությամբ պարզվել է, որ Արտյոմ Ղազարյանը, գտնվելով հսկիչ անցագրային կետի վերակարգում (շինության ներսում), ուշաթափվել և վայր է ընկել:

Ընդունվելով նույն զորամասի վերակենդանացման բաժանմունք՝ մոտ 1 ժամ անց զինծառայողի մոտ արձանագրվել է սրտի կանգ և մահ:

Արտյոմ Ղազարյանի մայրը՝ Եսենիա Ղազարյանը, forrights.am կայքի հետ զրույցում հայտնել է, որ որդին զորակոչվել է զինծառայության 2018 թ.-ի հուլիսին և ունեցել միայն հարթաթաթություն ու ողնաշարի ծռվածություն: Զինծառայության ընթացքում նա ոչ մի բողոք չի ունեցել: Ավելին՝ 2019թ.-ի դեկտեմբերի 22-ին Ղազարյանին տրամադրվել է արձակուրդ, որի ընթացքում, ըստ մոր, Ղազարյանը ևս ոչ մի բողոք չի ունեցել: Դեկտեմբերի 27-ին զինծառայողը վերադարձել է զորամաս:

Դեկտեմբերի 31-ի գիշերը Արտյոմ Ղազարյանը հեռախոսով խոսել է հարազատների հետ և հայտնել, որ ամեն ինչ լավ է: Իսկ 2020 թ.-ի հունվարի 1-ի առավոտյան արձանագրվել է նրա մահը:

Արտյոմ Ղազարյանի հայրը՝ Արթուր Մխիթարյանը, դիակի զննությանը ներկա գտնվելով, նկատել է, որ որդու մեջքի հատվածից մինչև ոտքերը կապտուկներ են եղել:

[41] http://investigative.am/news/view/h-aramyan-dzerbakalum.html
[42] http://nkrmil.am/news/view/2634

Հարցին, թե ինչու է այդպես, դատաբժիշկը պատասխանել է, որ հնարավոր է կապտուկներն առաջացել են զինծառայողին մի քանի ժամ տևողությամբ ճանապարհով տեղափոխելու արդյունքում[43]:

2. Վալերի Պետրոսյան

2020թ.-ի փետրվարի 9-ին՝ ժամը 07:45-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկում հանկարծամահ է եղել ժամկետային զինծառայող Վալերի Նելսոնի Պետրոսյանը[44]:

Դեպքի առթիվ առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը, եթե անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ[45]: Կատարվում է նախաքննություն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ զինծառայողը 2 օր առաջ դիմել է զորամասի բուժկետ և հայտնել, որ իրեն լավ չի զգում, սակայն զորամասի բուժկետում հերքում են այդ տեղեկությունները: Նույնիսկ զորամասի գրանցամատյանում չկա որևէ գրառում այն մասին, որ զինծառայողը դիմել է բուժկետ: Ըստ օրաթերթի տվյալների՝ իրավապահները պարզել են, որ զորակոչվելիս Պետրոսյանը որևէ առողջական խնդիր չի ունեցել[46]:

Ծառայության հետ չկապված

1. Հայկ Բարսեղյան

2020թ.-ի հունվարի 3-ին մահացած պայմանագրային Հայկ Բարսեղյանի մահվան մասին տեղեկություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ էլ ԶԼՄ-ներով: Դեպքի մասին նախ հայտնել է razm.info կայքը՝ ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեագրված իր հարցման պատասխանից: Կայքը, մասնավորապես, տեղեկացրել է, որ պայմանագրային զինծառայողի ինքնազգացողությունը վատացել է, ինչից հետո նա մահացել է[47]:

ՀՀ կենտրոնական զինվորական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրված տեղեկության համաձայն՝ զինծառայողը դեպքի պահին գտնվել է ազատ հերթափոխում՝ տանը:

---

[43] forrights.am/2020/02/25/հիվանդությունից-մահացած-զինծառայողի/
[44] http://nkrmil.am/news/view/2674
[45] https://epress.am/2020/02/10/1621-2.html?fbclid=IwAR2I7BuYVbgJuE6x24GdHGSoFjd6jdy0tE0Ieo-6THLtgJnlWvVgcZg-rS8, https://armenpress.am/arm/news/1004229/
[46] https://www.1in.am/2700151.html
[47] https://razm.info/140067

Մահվան փաստով վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչությունը: Արդյունքում որոշում է կայացվել՝ քրեական գործի հարուցելը մերժելու մասին:

2. **Կարեն Դարբինյան**

2020թ.-ի հունվարի 3-ին մահացած սպա Կարեն Դարբինյանի մահվան մասին տեղեկություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ էլ ԶԼՄ-ներով: Դեպքի մասին razm.info կայքը տեղեկացել է ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեգրված իր հարցման պատասխանից, որով և տեղեկացել է, որ սպան մահացել է ինքնազգացողության վատացման արդյունքում [48]:

ՀՀ կենտրոնական զինվորական դատախազության՝ Կազմակերպությանը տրամադրած տեղեկության համաձայն՝ մահվան փաստով վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Նոր Նորքի բաժինը:

Հատագայում քրեական գործի հարուցումը մերժվել է:

3. **Ալեքսանդր Թազագուլյան**

2020թ.-ի մարտի 21-ին մահացած սպա Ալեքսանդր Թազագուլյանի մահվան վերաբերյալ տեղեկություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ էլ ԶԼՄ-ով:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունից ստացված գրությամբ, որով, մասնավորապես, տեղեկացրել են, որ 2020թ.-ի մարտի 19-ից զինծառայողը գտնվել է «Էրեբունի» ԲԿ-ում՝ «հեմոռագիկ ինսուլտ» ախտորոշմամբ, ուր 2 օր անց մահացել է:

Տեղեկացվել է նաև, որ զինծառայողի մահվան փաստով վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Էրեբունու բաժինը: Հետագայում քրեական գործի հարուցումը մերժվել է:

4. **Խաչիկ Բաղալյան**

2020թ.-ի մայիսի 24-ին առողջական խնդիրների հետևանքով մահացած պայմանագրային զինծառայող Խաչիկ Բաղալյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դեպքի մասին հայտնի է դարձել հունիսի 27-ին՝ razm.info կայքում հրապարակված նյութից: Կայքը, մասնավորապես, հայտնել է, որ դեպքի մասին տեղեկացել է դատախազությանն ուղղված հարցման պատասխանից[49]:

[48] https://razm.info/140067
[49] https://razm.info/143607

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացրել են, որ զինծառայողը մայիսի 15-ին ընդունվել է «Էրեբունի» ԲԿ՝ ծայրահեղ ծանր վիճակում, ուր և մահացել՝ մի քանի օր անց: Զինծառայողի մոտ ախտորոշվել էր «հիպերտոնիկ կրիզ, հեմոռագիկ ինսուլտ»:

Վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը:

5. Վազգեն Մարգարյան

2020 թ.-ի հունիսի 2-ին մահացած սպա Վազգեն Մարգարյանի մահվան վերաբերյալ տեղեկություն չի տարածվել ո՛չ պաշտոնապես, ո՛չ էլ ԶԼՄ-ներով:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, ուր, մասնավորապես, նշվել է, որ զինծառայողը մայիսի 29-ին ընդունվել է «Գր. Լուսավորիչ» ԲԿ՝ «կորոնավիրուսային հիվանդություն, թոքային զարկերակի տրոմբոէմբոլիա» ախտորոշմամբ:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

6. Մարիամ Դավթյան

2020թ.-ի հունիսի 4-ին մահացած պայմանագրային զինծառայող Մարիամ Դավթյանի մահվան վերաբերյալ ևս տեղեկություն չի տարածվել:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, ուր, մասնավորապես, նշվել է, որ զինծառայողի մոտ առկա է եղել ձախ կրծքագեղձի քաղցկեղ՝ 4-րդ փուլում՝ գլխուղեղի, թոքերի, լյարդի մետաստազներով: Վերջինս մահացել է տանը:

Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

7. Սևադա Խաչատրյան

2020թ.-ի հունիսի 6-ին մահացած ենթասպա Սևադա Խաչատրյանի մահվան վերաբերյալ ևս տեղեկություն չի տարածվել:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, ուր, մասնավորապես, նշվել է, որ զինծառայողը հանկարծամահ է եղել տանը՝ սրտամկանի ինֆարկտից:

Տեղեկացվել է, որ վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժինը:

8. Արամ Անանյան

2020թ.-ի հունիսի 12-ին մահացած պայմանագրային զինծառայող Արամ Անանյանի մահվան վերաբերյալ ևս տեղեկություն չի տարածվել:

Դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, ուր, մասնավորապես, նշվել է, որ զինծառայողը հանկարծամահ է եղել իրեն պատկանող վագոն-տնակում:

Տեղեկացվել է նաև, որ վարույթն իրականացրել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժինը:

Ե. Ավտովթար

Ծառայության հետ կապված

1. **Սարգիս Ղուլյան**

Ըստ ԱՀ/ԷՂ ՊՆ -ի տարածած հաղորդագրության՝ 2020թ.-ի հունիսի 3-ին ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով մահացել է ՊԲ-ի հյուսիս-արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի ժամկետային զինծառայող, 2001թ.-ին ծնված Սարգիս Մասիսի Ղուլյանը[50]*:*

ՀՀ ՔԿ-ը հետագայում տարածեց տեղեկություն այն մասին, որ Մատաղիս-Մարտակերտ ավտոճանապարհի 17 կմ հատվածում, զորամասի հաշվեկշռում գտնվող «Ուրալ» մակնիշի զինհամարանիշի ավտոմեքենան, զորավարժությունից վերադառնալիս, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից և կողաշրջվել, ինչի հետևանքով թափքում գտնվող պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սարգիս Մասիսի Ղուլյանը ստացած վնասվածքներից մահացել է, իսկ լեյտենանտ Աբրահամ Տիգրանի Մարուխյանը, պարտադիր ժամկետային զինծառայողներ՝ կրտսեր սերժանտ Դավիթ Արմենի Սարգսյանը, շարքայիններ՝ Միքայել Սամվելի Վահանյանը, Ժիրայր Վիկտորի Մանուկյանը, Արման Վահրամի Պողոսյանը և Արտակ Վարդանի Շեկոյանը, տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Մարտակերտի զինվորական հոսպիտալ:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով (մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ)[51]: Կատարվում է նախաքննություն:

Ծառայության հետ չկապված

1. **Նարեկ Հովակիմյան**

2020թ.-ի մարտի 6-ին Երևանի Իսակովի պողոտայում բախվել են «Մերսեդես» մակնիշի 2 ավտոմեքենաներ: Մեքենաներից մեկի վարորդ՝ 44-ամյա Նարեկ Հովակիմյանը, ով ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակից էր, սպա, կոչումով՝ փոխգնդապետ, տեղում մահացել է[52]*:*

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Դեպքի մասին պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:

---

[50] http://nkrmil.am/news/view/2802
[51] http://investigative.am/news/view/zinvorakan-megena-vtar-mataxis-martakert.html
[52] https://shamshyan.com/hy/article/2020/03/07/1149246/

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության՝ Կազմակերպությանը տրամադրած տեղեկության համաձայն՝ զինծառայողը վթարի է ենթարկվել անձնական մեքենայով: Տեղեկացվել է նաև, որ դեպքով վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ ՃՏՊ քննության բաժինը: Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

2. Էրիկ Ղազարյան

2020թ.-ի հունիսի 18-ին մահացած պայմանագրային զինծառայող Էրիկ Ղազարյանի մահվան վերաբերյալ ևս տեղեկություն չի տարածվել:

Դեպքի մասին ՀՔԱ Վանաձորի գրասենյակին հայտնի է դարձել ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանից, որով, մասնավորապես, տեղեկացվել է, որ զինծառայողը վթարի է ենթարկվել իր վարած «Օպել» մակնիշի մեքենայով, ինչի հետևանքով տեղում մահացել է:

Տեղեկացվել է նաև, որ վարույթն իրականացրել է ԼՂ/ԱՀ Ասկերանի ոստիկանության շրջանային բաժինը: Դեպքի մասին այլ մանրամասներ հայտնի չեն:

Զ. Դժբախտ պատահար

Զինվորական ծառայության հետ կապված

Ընկել է ձորը

1. **Արթուր Նալբանդյան**

2020թ.-ի հունվարի 21-ին՝ ժամը 13:15-ի սահմանում, ԱՀ/ԼՂ ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, դժբախտ պատահարի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող, 1980թ.-ին ծնված Արթուր Մարտունի Նալբանդյանը[53]*:*

ՀՀ քննչական կոմիտեի՝ ԶԼՄ-ներից մեկին տրամադրած տվյալների համաձայն՝ պայմանագրային զինծառայողը մահացել է՝ ձորն ընկնելու հետևանքով[54]:

Դեպքի առթիվ 3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ: Ըստ ՀՔԱ Վանաձոր գրասենյակին ՀՀ գլխավոր դատախազությունից հայտնած տեղեկության՝ հարուցված քրեական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Զինծառայողները մնացել են ձնահյուսի տակ

1. **Կարապետ Նազարյան**
2. **Տիգրան Արզումանյան**

[53] http://nkrmil.am/news/view/2646
[54] https://ipress.am/arm/military/52

3. Նվեր Շահբազյան

2020թ.-ի փետրվարի 7-ին՝ ժամը 16:50-ի սահմաններում, Սյունիքի մարզի զորամասերից մեկի պահպանության տեղամասում ձնահյուսի տակ են մնացել 4 պայմանագրային զինծառայողներ:

Ձեռնարկված որոնողա-փրկարարական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են պայմանագրային զինծառայողներ՝ շարքային Կարապետ Սեդրակի Նազարյանի, կրտսեր սերժանտ Տիգրան Արմենի Արզումանյանի և կրտսեր սերժանտ Նվեր Տիգրանի Շահբազյանի դիերը:

Պայմանագրային զինծառայող, շարքային Համլետ Գրենիկի Միրզոյանին հաջողվել է դուրս բերել ձնահյուսից: Նա ստացել է մարմնական թեթև վնասվածքներ[55]:

NEWS.am-ի հետ զրույցում Համլետ Միրզոյանը հայտնել է, որ դեպքը տեղի է ունեցել դիրքերից զորամաս գնալու ճանապարհին՝ խրամատների մոտ, երբ զինծառայողների ոտքերի տակ ձյան շերտը բացվել է, ու ընկելով՝ նրանք տնական ժամանակ մնացել են ձյան շատ հաստ շերտի տակ:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով[56]: Կատարվում է նախաքննություն:

Դժվախտ պատահար

Զինվորական ծառայության հետ չկապված

Հրդեհ մեքենայում

1. Հովիկ Քոսակյան

2020թ.-ի մայիսի 20-ին ավտոմեքենայում բռնկված հրդեհի հետևանքով մահացած սպա Հովիկ Քոսակյանի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Դեպքի մասին հայտնի է դարձել հունիսի 27-ին՝ razm.info կայքի հրապարակումից, ուր նշվել է, որ դեպքի մասին կայքին հայտնի է դարձել դատախազությանն ուղարկված հարցման պատասխանից[57]:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի՝ ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցմանն ի պատասխան՝ տեղեկացվել է, որ Արմավիր-Երևան ավտոմայրուղու Զվարթնոց գյուղի հատվածում հրդեհվել է «Մազդա» մակնիշի մեքենա, որում զինծառայողը գտնվել է՝ որպես ուղևոր: Չկարողանալով դուրս գալ մեքենայից՝ զինծառայողն ստացած այրվածքներից տեղում մահացել է:

Հայտնի չէ՝ արդյո՞ք դեպքի պահին զինծառայողը գտնվել է զինծառայության մեջ, թե ազատ հերթափոխում: Հայտնի չէ նաև, թե ում մեքենայում է գտնվել զինծառայողը դեպքի պահին:

[55] http://mil.am/hy/news/7441
[56] https://yn.am/?military&p=101742&l=am
[57] https://razm.info/143607

Կազմակերպությանը ՀՀ գլխավոր դատախազությունը տեղեկացրել է, որ վարույթն իրականացրել է ՀՀ ՔԿ Վաղարշապատի քննչական բաժինը: Այլ մանրամասներ դեպքի մասին հայտնի չեն:

Տրակտորի շրջվելու հետևանքով

1. Հակոբ Բաբասյան

2020թ.-ի հունիսի 28-ին, Տավուշի մարզի Բերդ համայնքի Արծվաբերդ բնակավայրի «Թագավորանց» կոչվող թաղամասում, տրակտորի շրջվելու հետևանքով Բերդի բժշկական կենտրոնում, գիտակցության չգալով, մահացել է պայմանագրային զինծառայող 30-ամյա Հակոբ Բաբասյանը:

Վերջինիս եղբայրը՝ 37-ամյա զինծառայող Կարեն Բաբասյանը, ով ևս գտնվել է տրակտորի մեջ, ստացել է մարմնական վնասվածքներ[58]:

ՀՀ գլխավոր դատախազության՝ Կազմակերպությանը տրամադրած տեղեկության համաձայն՝ զինծառայողը դեպքի պահին գտնվել է ազատ հերթափոխում:

Տեղեկացվել է նաև, որ դեպքի առթիվ ՀՀ ՔԿ 6-րդ կայազորային քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր:

Է. Ականի պայթյուն

Զինվորական ծառայության հետ կապված

1. Տարոն Պողոսյան

2020թ.-ի մայիսի 4-ին ականապայթյունային մահացու վիրավորում է ստացել ԱՀ/ԼՂ ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի զինծառայող, սպա, 1988թ.-ին ծնված Տարոն Պողոսյանը[59]:

Կազմակերպությանը հայտնի պաշտոնական տվյալների համաձայն՝ մայոր Տարոն Պողոսյանը գտնվել է զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի թիկունքային հատվածում, երբ տեղի է ունեցել ականի պայթյունը:

Զինծառայողի մահվան դեպքի փաստով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով (անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ)[60]: Կատարվում է նախաքննություն:

[58] https://shamshyan.com/hy/article/2020/06/28/1158449/
[59] http://nkrmil.am/news/view/2771
[60] https://armeniasputnik.am/society/20200505/22944349/zincarayox-mah-tcarayutyun-anpuyt-verabermunq.html